ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-22/7-1

ք. Երևան

«17» նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷԼԼԻՊՍ ՋԻԷՅ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գոռ Զատիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 44049996 /քառասունչորս միլիոն քառասունինը հազար ինը հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.2 Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով

(հավելված N 2) նախատեսված ամիսներին: Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

5.5 Սույն պայմանագրի 5.1 կետում նշված հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օր է համարվում պատվիրատուի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու օրը:

<< ռեզիդենտ չհանդիսացող կազմակերպությունների համար Ապրանքի մատակարարման օր է հանդիսանում ներմուծվող ապրանքների << մաքսային տարածքը հատելու օրը, որը սահմանվում է ապրանքները մաքսազերծելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված հանձնման-ընդունման արձանագրությամբ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ

հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի

սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող

«ԷԼԼԻՊՍ ՋԻԷՅ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ն. Տիգրանյան 27
ՀՎՀՀ՝ 00067177
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022113371001

Գոռ Զատիկյան
Տնօրեն

Գնորդ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Հավելված N 1
«17» նոյեմբերի 2022թ. կնքված
ՀՀՀ-ՀՄԱՊՁԲ-22//7-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	35121320/2	Ցանցային տեսախցիկ դեմքի ճանաչման հնարավորությամբ	Hikvision, iDS-2CD7146G0-IZS	Պատկերը՝ նվազագույնը 4ՄՊ, սենսորը՝ 1/1.8" Progressive Scan CMOS Կետայնությունը՝ նվազագույնը 2560 × 1440 Նվազագույն լուսավորությունը՝ առավելագույնը 0.0005 Lux @ (F1.2, AGC ON); B/W: 0.0001 Lux @ (F1.2, AGC ON), 0 Lux IR-ի հետ Պատկերի որսալու արագությունը՝ 1վ-ից 1/100000վ Ոսպնյակը՝ 2.8մմ-ից 12մմ, հորիզոնական FOV: 114.5°-ից 41.8°, ուղահայաց FOV: 59.3° -ից 23.6°, անկյունագծային FOV: 141.1° -ից 48° Ապերտուրան՝ նվազագույնը 2.8-ից 12 մմ: F1.2 -ից 2.5 Տեսախցիկի DORI ֆունկցիոնալությունը պետք է լինի նվազագույնը. -Լայն՝ օբյեկտի հայտնաբերում՝ 60մ , Դիտարկումը՝ 23,8մ , ճանաչումը՝ 12մ, նույնականացումը՝ 6մ -Տելե՝ օբյեկտի հայտնաբերում՝ 149մ , Դիտարկումը՝ 59.1մ , ճանաչումը՝ 29,8մ, նույնականացումը՝ 14,9մ	հատ	588281.18	44049996	64	ՀՀ ք.Երևան Լենինգրադյան փ. 1 /Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր/	64	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/

				IR՝ նվազագույնը 30մ Վիդեո հոսքերը նվազագույնը ՝ հիմնական հոսք՝ 50 Հց: 50 կ/վ (2560 × 1440, 1920 × 1080, 1280× 720) 60 Հց: 60 կ/վ (2560 × 1440, 1920 × 1080, 1280× 720) Երկրորդային հոս՝ 50 Հց: 25 կ/վ (704 × 480, 640 × 480) 60 Հց: 30 կ/վ (704 × 480, 640 × 480) Երրորդային հոսք՝ 50 Հց: 25 կ/վ (1920 × 1080, 1280 × 720, 704 × 480, 640 × 480) 60 Հց: 30 կ/վ (1920 × 1080, 1280 × 720, 704 × 480, 640 × 480) Չորրորդային հոսք՝ 50 Հց: 25 կ/վ (704 × 480, 640 × 480) 60 Հց: 30 կ/վ (704 × 480, 640 × 480) Հինգերորդ հոս՝ 50 Հց: 25 կ/վ (704 × 480, 640 × 480) 60 Հց: 30 կ/վ (704 × 480, 640 × 480) Վիդեո սեխմումը՝ նվազագույնը H.265+/H.265/H.264+/H.264/MJPEG Վիդեո բ/ռ-ն ՝ 32 կբ/վto 8 Մբ/վ Վիդեո ելքերը՝ նվազագույնը 1 Vp-p Composite Output (75 Ω/CVBS) (միայն վրիպազերծման համար) Նվազագույնը 4 ֆիքսված տարածք բոլոր հոսքերի համար Տեսախցիկը պետք է ունենա նվազագույնը 1 ներկառուցված խոսափող Աուդիո սեխմումը՝ G.711/G.722.1/G.726/MP2L2/PCM/AAC/MP3 Աուդիո բ/ռ-ն՝ 64 Կբ/վ (G.711)/16 Կբ/վ (G.722.1)/16 Կբ/վ (G.726)/32-ից 192 Կբ/վ (MP2L2)/16-ից 64 Կբ/վ (AAC) /8 –ից 320 Կբ/վ (MP3) Նվազագույնը՝ 1 –ական մուտք (line in) և ելք (line out), 3.5 մմ կոնեկտոր Շրջակայքի ձայների ֆիլտրում							

				Պրոտոկոլները՝ նվազագույնը TCP/IP, ICMP, HTTP, HTTPS, FTP, SFTP, SRTP, DHCP, DNS, DDNS, RTP, RTSP, RTCP, PPPoE, NTP,UPnP, SMTP, SNMP, IGMP, 802.1X, QoS, IPv6, UDP, Bonjour, SSL/TLS, (PROFILE S, PROFILE G, PROFILE T), ISAPI, SDK, ISUP Միաժամանակյա 20 ալիքների դիտման հնարավորություն, նվազագույնը 32 օգտագործողների հնարավորություն Ցանցահիմքային պահուստը՝ NAS, NFS, SMB/CIFS , ANR Գիշեր ցերեկ ռեժիմ, WDR-ը նվազագույնը 140դԲ, BLC, HLC, Defog, 3D DNR Նվազագույնը՝ 1 RJ45 10 M/100 M/1000, 1 վիդեո ելք Նվազագույնը 256 ԳԲ microSD/microSDHC/microSDXC հնարավորություն Նվազագույնը 1-ական ահազանգի մուտք/ելք (առավելագույնը 24 VDC, 1 Ա) Նվազագույնը 1 RS-485 (half duplex, , Pelco-P, Pelco-D, self-adaptive) Տեսախցիկը պետք է հագեցած լինի նվազագույնը հետևյալ գործառույթներով՝ Շարժի հայտնաբերում, վիդեո ահազանգ, բացառելու հնարավորություն, վիդեո որակի դիագնոստիկա, գծի հատման հայտնաբերում, ներխուժման հայտնաբերում, տարածք մուտ և ելքի հատնաբերում, դեֆոկուս, սցենարի փոփոխություն Պետք է աջակցի մարդկանց մարմնի, դեմքի և փոխադրամիջոցների հայտնաբերում նորսում Պետք է հայտնաբերի նվազագույնը 60 դեմք միաժամանակ, դեմքերի համեմատում, նվազագույնը դեմքերի 10 խմբերի բազա ստեղծման հնարավորություն,							

				ընդամենը նվազագույնը 150000 դեմք հիշելու հնարավորություն , աջակցում է դեմքերի բազաների կոդավորում Սնուցումը՝ 12 VDC± 20%, 24 VAC± 20%, PoE: 802.3at, Type 2 Աշխատանքային ջերմաստիճանը՝ նվազագունը -30 °C-ից 60 °C Պաշտպանվածությունը՝ նվազագույնը IK 10 **iDS-2CD7146G0-IZS կամ համարժեք** **Ներառում է՝** **1. Ցանցային տեսաձայնագրիչ HIKVISION DS-96128NI-I16 կամ համարժեք - 1 հատ** **Բնութագիրը՝** Նվազագույնը 128 ցանցային տսախցիկ միացնելու հնարավորությամբ, Մուտքի/Ելքի թողունակությունը՝ նվազագույնը 576 Մբ/վ/512 Մբ/վ, TLS ելքի թողունակությունը՝ 128Մբ/վ Պրոտոկոլներ՝ ACTi, ARECONT, AXIS, BOSCH, BRICKCOM, CANON, HUNT, ONVIF (Version 2.5), PANASONIC, PELCO, RTSP, SAMSUNG, SONY, VIVOTEK, ZAVIO Նվազագույնը 2 անկախ HDMI ելք 4K թողունակության համար. Թողութնակությունը՝ նվազագույնը 4K (4096 × 2160), 4K (3840 ×2160)/30Hz, 2K (2560 × 1440)/60Hz, 1080p (1920 × 1080)/60Hz, UXGA (1600 × 1200)/60Hz, SXGA (1280 × 1024)/60Hz, 720p (1280 × 720)/60Hz, XGA (1024 × 768)/60Hz Նվազագույնը 1 VGA ելք. Թողունակությունը նվազագույնը 1080p (1920 × 1080)/60Hz, UXGA (1600 × 1200)/60Hz, SXGA (1280 ×1024)/60Hz, 720p (1280 × 720)/60Hz, XGA (1024 × 768)/60Hz							

				Նվազագույնը 1 աուդիո ելք RCA (2.0 Vp-p, 1 KΩ) Դեկոդավորման ֆորմատը՝ H.265, H.265+, H.264, H.264+, MPEG4 Վիդեո թողունակությունը նվազագույնը 12MP, նվազագույնը 30 կադր/վ Կոշտ սկավառակի միացման ինտերֆեյսը առնվազն 16 հատ SATA, յուրաքանչյուրը նվազագույնը 10 ՏԲ տարողունակությամբ Ցանցային պրոտոկոլներ՝ IPv6, HTTPS, UPnP, SNMP, NTP, SADP, SMTP, NFS, iSCSI, PPPoE, DDNS, ցանցային ինտերֆեյսը նվազագույնը 4 հատ ինքնահարմարվող RJ45 10M/100M/1000M self-adaptive Ethernet ինտերֆեյս Երկկողմանի աուդիոյի հնարավորություն, նվազագույնը 4 հատ USB, RS232, RS485, Ստեղնաշար Ահազանգի I/O նվազագույնը 16/8 Հոսանքը՝ 100-ից 240 VAC, 50-ից 60Հց, առավելագույնը 5 Ա Սպառումը՝ մինչև 140W Աշխատանքային ջերմաստիճանը նվազագույնը 0 °C-ից + 50 °C **2. Սերվեր դեմքի ճանաչման լիցենզիոն ծրագրային ապահովումով DS-VE11D-C/HW01 կամ համարժեք- 1 հատ** **Բնութագիրը՝** Պրոցեսորը՝ նվազագույնը Intel® Xeon® E-2100, y, Intel Pentium®, Intel, Core i3®, Intel Celeron® Հիշողությունը՝ նվազագույնը 4 DDR4 DIMM, 2666MT/s, 64GB Պահուստի ներքին ղեկավարիչները՝ : PERC H730P, H330, HBA330, արտաքին ղեկավարիչները՝ 12Գբ/վ SAS HBA, մինչև 4 x 3.5 or 2.5 hot-plug SATA, SAS կամ SSD							

				Սնուցումը՝ 250Վ Չափը՝ ոչ ավել Rack (1U) Նվազագույնը 1x USB 2.0 առջևից, 2 x USB 3.0, VGA կողային հատվածից Սարքը պետք է համալրված լինի HikCentral-P-FacialReco- 64Ch կամ համարժեք ծրագրային ապահովումով, որը իր մեջ պետք է ներառի 64 տեսախցիկի՝ դեմքի ճանաչման ընդլայնման փաթեթ՝ ներառյալ դեմքի նույնականացման մոդուլի բոլոր գործառույթները, այդ թվում դեմքի հայտնաբերում, ճանաչում, նույնականացում: Պետք է աջակցի անձի կամ անձերի խմբերի տեղեկատվության կառավարումը, Դեմքի ճանաչման մոնիտորինգ և գործարկում, Անձի անուն/նկարի որոնում 64 տեսախցիկների միջոցով, որոնք պետք է աշխատեն մեկ ծրագրով, Անձի դեմքի համընկնող/չհամընկնող ահազանգ և այլն: 3. **Կոշտ սկավառակ Seagate ST10000VX0002 Կամ համարժեք - 5 հատ** **Բնութագիրը՝** նախատեսված տեսահսկման համակարգի համար: Նվազագույնը 10 ՏԲ հիշողության ծավալով, 256MB,SATA 6Gb/s 4. **Smart կառավարվող սվիչ DS-3E1310P-SI կամ համարժեք - 5 հատ** **Բնութագիրը՝** Նվազագույնը 8 × 100 Մբ/վ PoE RJ45 պորտեր, 2 × gigabit combo պորտեր Պորտի տիպը՝ RJ45 պորտ, full duplex, MDI/MDI-X հարմարացվող Ստանդարտներ՝ IEEE 802.3, IEEE 802.3u, IEEE 802.3x, IEEE 802.3ab, and IEEE802.3z Աշխատանքային ձև՝ ստանդարտ և ընդարձակ ռեժիմներ							

				MAC հասցեները՝ նվազագույնը 16K Միացման արագությունը՝ նվազագույնը 5.6 Գբ/վ Փաթեթի ուղարկման գործակիցը՝ նվազագույնը 4.1664 Մպ/վ Ներքին քեշը՝ 4Մբիթ/վ POE ստանդարտներ՝ IEEE 802.3af, IEEE 802.3at Առավելագույն POE պորտի հզորություն՝ 125Վ Նվազագույնը՝ 300 մ տարածության վրա աշխատելու հնարավորություն Առավելագույն սպառումը՝ 150 Վ Աշխատանքային ջերմաստիճանը՝ 10°C-ից 55°C Հոսանքի սպառումը՝ 100 VAC~240 VAC, 50/60 Հց, Առավելագույնը 1.5 Ա 5. **SFP մոդուլ HK-SFP-1.25G-10 հատ** **Բնութագիրը՝** - Ցանցային SFP մոդուլ - Մեկ էլեկտրամատակարարում 3.3V - Փոքր ձևի գործոնի միակցիչ (SFP) MSA համատեղելի - Կրկնակի LC միակցիչ - Hot Pluggable ունակություն - Համապատասխան ROHS ստանդարտին - SFP- ի ծախսարդյունավետ լուծումը՝ հնարավորություն է տալիս ավելի մեծ խտություն և ավելի մեծ թողունակություն - Աջակցություն 1.25G Ethernet - Մանրաթելային տիպի SMF, դուպլեքս մանրաթել, 9 / 125um Միակցիչ LC Ամսաթիվը գնահատման 1250 Մբիթ / վրկ Միակցիչի քանակը 2 Հեռավորությունը 0 ~ 20 կմ Ալիքի երկարություն Tx1310nm / Rx1310nm TX ուժը -6 -1dBm							

				RX սենս (առավելագույն) -21dBm Գործող single mode Ջերմաստիճանը 0 ~ 70˚C Պահպանման ջերմաստիճանը -40 ~ 85˚C Հարաբերական խոնավությունը 30 ~ 80% **6. Չկառավարվող ցանցային սվիչ DS-3E0106P-E/M կամ համարժեք - 7 հատ** **Բնութագիրը՝** Նվազագույնը՝ 4 x 10/Մբ/վ PoE պորտեր, 2 × 10/Մբ/վ RJ45 պորտեր Պորտի տիպը՝ RJ45 պորտ, full duplex, MDI/MDI-X հարմարեցվող Ստանդարտներ՝ IEEE 802.3, IEEE 802.3u, IEEE 802.3x MAC հասցեները՝ նվազագույնը 4K Միացման արագությունը՝ 1.6 Գբ/վ Փաթեթի ուղարկման գործակիցը՝ նվազագույնը 0.8928 Մպ/վ Ներքին քեշը՝ նվազագույնը 768 Կբիթ POE ստանդարտներ՝ IEEE 802.3af, IEEE 802.3at POE առավելագույն հզորությունը՝ 35վ Աշխատանքային տարածությունը՝ նվազագույնը 300մ Ընդհանուր առավելագույն հզորությունը՝ նվազագույնը 38 վ **7. Ցանցային մալուխ DS-1LN6-UE-W կամ համարժեք - 6200 մ** **Բնութագիրը՝** Տեսակը՝ U/UTP Cat6 24AWG զույգերի քանակը՝ նվազագույնը 4 զույգ Նյութը՝ HDPE Միջուկի նյութը՝ 99.95% պղինձի Տրամագիծը՝ նվազագույնը 0.53մմ+/- 0.05մմ Դիմադրությունը՝ նվազագույնը 100±15 Ω 1,0 – 250 ՄՀց-ի ժամանակ							

				Աշխատանքային փերմաստիճանը՝ -20°C-ից +75°C Աշխատանքային լարումը՝ 80Վ Փաթեթավորումը՝ տուփ (գլանափ), մալուխի անընդհատ երկարությունը՝ առնվազն 305 մ Պայմանագրային գինն իր մեջ ներառում է ապրանքի տեղակայման, հավաքման, գործարկման, Պատվիրատու Ընկերության ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ կապված աշխատանքների, ապրանքի անխափան աշխատանքի թեստավորման, Ինչպես նաև Մատակարարի կողմից Պատվիրատուի կողմից սահմանած օրը ապրանքի ապամոնտաժման աշխատանքները:							

Վաճառող

«ԷԼԼԻՊՍ ՋԻԷՅ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ն. Տիգրանյան 27
ՀՎՀՀ՝ 00067177
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022113371001

Գոռ Զատիկյան
Տնօրեն

Գնորդ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Հավելված N 2
«28» դեկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-22/4-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	35121320/2	Ցանցային տեսախցիկ դեմքի ճանաչման հնարավորությամբ	0	0	0	0	0	0	0	0	0	0	44049996	44049996	44049996

Վաճառող
«ԷԼԼԻՊՍ Ջի Էյ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ն. Տիգրանյան 27
ՀՎՀՀ՝ 00067177
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022113371001

Գոռ Զատիկյան
Տնօրեն

Գնորդ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Հավելված N 3
«---» նոյեմբերի 2022թ. կնքված
ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-22/7-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«---» նոյեմբերի 2022թ. կնքված
ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-22/7-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Վաճառողի անվանումը
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն